

PSYCHOLOGICAL FACTORS CONCERNING THE CONTINUITY OF HIGHER EDUCATION IN THE POST-WAR PERIOD (ON THE EXAMPLE OF ARTSAKH)

Yaramishyan V.B. (Artsakh State University, Stepanakert, Artsakh)

vityayaramishyan@mail.ru

Ներկայացման ամս. 23.07.2021

Գրախոսման ամս. 14.08.2021

Տպագրության ընդունման ամս. 24.08.2021

The article presents an analysis of the results of a pilot study of the psychological states of students and teachers of Artsakh State University in the post-war period. In general, measures are described to ensure the continuity of higher education and to overcome the signs of post-war syndrome, as well as issues of informing and psychological support of university graduates. A comparison of the advantages and disadvantages of the existing online classroom format, which is the result of generalizing the experience of university education during the Covid-19 period, is presented. Based on the data obtained, specific proposals and psychological recommendations have been developed to overcome difficult situations of various nature.

Keywords: *Post-war syndrom, psychological support, continuity, higher education, online learning, creative solutions.*

DOI: <https://doi.org/10.46991/SBMP/2021.4.2.357>

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախում սկսված պատերազմը հետագայում ստացավ 44-օրյա կամ «Ղարաբաղյան երկրորդ» պատերազմ անվանումը¹ [6]: Այն դժվար փորձություն էր հայության համար: Պատերազմում ներգրավվել էին մեծ թվով կենդանի ուժ, զրահատեխնիկա, հրետանի, օդուժ, անօդաչու թռչող սարքեր, այլ զինատեսակներ [7]: Այն ընթանում էր մեծ ինտենսիվությամբ, կրակի խտությամբ, չդադարող հարձակողական գործողություններով, նրա առանձին դրվագներ աչքի էին ընկնում անասելի դաժանությամբ²: Պատերազմի հասցրած վնասներն ու կորուստները առայսօր լիարժեք հաշվարկված չեն՝ մարդկային, տարածքային, նյութական կամ որևէ այլ առումով³ [7], իսկ Արցախի համար կորուստները չափազանց մեծ էին [8]: Սակայն, պատերազմը

¹ Երբեմն անվանում են Ղարաբաղյան երրորդ պատերազմ՝ նկատի ունենալով 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը:

² Տարածվում էին հայ ռազմագերիների նկատմամբ դաժան վերաբերմունքի տեսարաններ՝ ահաբեկելու նպատակ:

³ Շրջանառվում են 3500-ից մինչև 5000 զոհերի, մոտ 10.000 վիրավորների, մի քանի հարյուր անհայտ կորածների ու ռազմագերիների մասին տվյալներ:

ոչ միայն հաշվարկելի՝ տարածքային, մարդկային, նյութական կորուստներ է բերում, այլ նաև չհաշվարկվող՝ խեղված ճակատագրեր, տառապանքներ, հոգեկան խեղումներ, տևական, վիտալ սթրեսներ և այլ ծանր ապրումներ:

Պատերազմի ժամանակ Արցախում ուսումնական պարապմունքներ չէին անցկացվում՝ հրետակոծության պատճառով, ուստի գործընթացի շարունակականության խնդիրը իմաստ ունի կքննարկել հետպատերազմյան ժամանակահատվածի համար: Առհասարակ, «կրթության շարունակականություն» հասկացությունն ունի երկու կողմ: Առաջինը կրթության անընդհատությունն է, տևականությունը, անխափան ընթացքը և երկրորդը՝ դեպի վեր շարժումը, կրթական մակարդակի բարձրացումը: Մենք քննարկելու ենք «շարունակականությունը» առաջին, ժամանակային առումով, այսինքն՝ անընդհատությունը, անխափանությունը, հաստատության կողմից ծառայության մատուցման մշտականությունը, ինչը խաղաղ պայմաններում դժվար չէ, իսկ երբ առաջ են գալիս անվտանգային հարցեր, սպառնալիքի տակ են հայտնվում մարդկանց կյանքն ու առողջությունը, ապա խնդիրը դառնում է դժվար լուծելի: Օրինակ, 2016թ. ապրիլին կրթության «շարունակականությունը» գրեթե չի տուժել, եղել են պարապմունքների աննշան դադարներ: Արդեն ապրիլի 5-ին և 6-ին, այսինքն՝ պատերազմի սկզբից մի քանի օր անց, ԱրՊՀ-ն վերսկսել էր պարապմունքները՝ ուսանողների մինչև 80% ընդգրկմամբ: Հետագայում պարապմունքների ընթացքը լիարժեք ապահովվել է: Նույնը, սակայն, հնարավոր չեղավ 44-օրյա պատերազմի ժամանակ: Պատճառն այն է, որ թիրախավորվել էր Ստեփանակերտ քաղաքը՝ էլեկտրա- և ջրամատակարարման համակարգերը, կապի հանգույցները: Ոչ ռազմական օբյեկտներին նույնպես հարվածներ են հասցվել՝ հուսահատություն և խուճապ առաջացնելու նպատակով՝ կիրառելով հեռակառավարվող հրթիռներ, անօդաչու թռչող սարքեր, որոնց մահացու ներուժը ծայրաստիճան բարձր է: Նման իրավիճակում ուսումնական պարապմունքներ կազմակերպելը բարդ է: Բացի այդ, ուսանողները և դասախոսները գրիչը փոխարինել էին զենքով՝ Պատերազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո խնդիր դրվեց վերսկսելու պարապմունքները, սակայն դեռևս պարզ չէր, թե դրա իրագործման համար ի՞նչ նախադրյալներ կան: Առկա էր կազմակերպչական առնվազն մեկ խնդիր. ՀՀ-ում ապաստանած ուսանողները հաճախում էին տարբեր բուհեր: Այս ընդհանուր առմամբ դրական երևույթն ուներ թաքնված սպառնալիք, այն, որ ուսանողները կարող էին մշտական ներառվել տվյալ բուհերի ցուցակներում և այլևս չվերադառնալ Արցախ: Ահա թե ինչու գիտական խորհրդի որոշմամբ հայտարարվեց պարապմունքների

¹ 151 ուսանող (առանց հեռակա ուսուցման համակարգի) և դասախոս համալրել էին բանակի շարքերը, 60-ից ավելի կամավորներ ընդգրկվել էին թիկունքային ջոկատներում: Մարտական գործողությունների արդյունքում զոհվել է 24 ուսանող, 2-ը համարվում է անհայտ կորած, վիրավորում է ստացել 24 ուսանող (առկա համակարգ), տեղահանվել՝ 322-ը:

վերսկսման մասին: Պատերազմին նախորդած քովիդի համավարակի «շնորհիվ» ԱրՊՀ-ում ներդրվել էր հեռավար ուսուցման Google-Classroom համակարգը, ինչը հնարավորություն տվեց դասապրոցեսը կազմակերպել անընդհատ: Չնայած համացանցի և էլեկտրական հոսանքի մատակարարման խափանումներին, 2020թ. նոյեմբերին հաջողվեց դասընթացներին ընդգրկել ուսանողների մոտ 60%-ը: Դասախոսական կազմի և ուսանողների պատասխանատվության աստիճանի բարձրացման նպատակով հանձնարարված էր տեսաձայնագրել պարապմունքները և ներկայացնել պատճենները (screenshot): Գործադրված ջանքերը տվեցին իրենց արդյունքը, թեև ընթացքում ի հայտ էին գալիս նորանոր խնդիրներ: Օրինակ՝ փորձը ցույց տվեց, որ հեռավար պարապմունքների արդյունավետությունը բարձր չէ: Ուսանողներից շատերը, առերես միանալով պարապմունքին, իրականում չէին հետևում ընթացքին:

Արցախի կրթական համակարգի բնականոն գործունեության վերականգնման համար զգալի ջանքեր պահանջվեցին՝ մեղմելու համար այն ծանր հետևանքները, որոնք առաջ էին եկել պատերազմի արդյունքում. կորստյան վիշտ, վախեր ու տագնապներ, հոգեկան խեղումներ և վնասվածքներ, սուր սթրեսային հակազդումներ, հուսալքություն, զգայացունց տեսարանների վերապրումներ, խորը ընկճվածություն, հոգեկան կառույցների փլուզումներ, գոյաբանական ու արժեհամակարգային փլուզումներ: Ընդ որում, այս խնդիրները վերաբերում էին ոչ միայն պատերազմի մասնակիցներին, այլև թիկունքում գտնվող ուսանողներին և դասախոսներին, որովհետև «թիկունք» հասկացություն իրականում չկար: Հայտնի է, որ մարտական իրադրության պայմաններում հոգեբանական գործոններն իրենց ազդեցությամբ կարող են էականորեն փոխել մարդու վարքը և հոգեվիճակները: Մարտական իրավիճակի տարրերն ընդունված է անվանել մարտի հոգեծին գործոններ կամ մարտական սթրեսորներ [1, էջ 106], որոնք մասնագետները սովորաբար բաժանում են երկու խմբի՝ արտաքին կամ օբյեկտիվ և ներքին կամ սուբյեկտիվ [2, էջ 42]: Արտաքին գործոնները հակառակորդի ներգործությունն են՝ գործողությունների բնույթը և տեմպը, սպառազինությունը և ռազմական տեխնիկան, հոգեբանական գրոհները, ինչպես նաև առկա կորուստները, վնասվածքները, տիրապետող տրամադրությունները, ասեկոսները և այլն: Այս ամենը մանրամասն ուսումնասիրված է, ուստի այստեղ չենք քննարկի [1, 2, 3, 4, 5]: Միայն ավելացնենք, որ այն օրինաչափությունները, որոնք բացահայտված են զինձառայողների շրջանում, կիրառելի են նաև խաղաղ բնակիչների համար, եթե վերջիններս ռազմական հարձակման են ենթարկվել և ունեցել նմանատիպ հույզեր և զգացմունքներ: Առավել տիպական են ներքին գործոնները, որոնք պայմանավորված են մարտական գործունեության արտացոլման սուբյեկտիվ կողմերով: Այդ գործոնների թվում են վտանգի գիտակցումը և որպես դրա հետևանք՝ խուճապը, տեղեկույթի պակասը կամ դրա ավելցուկը, երբ այն գերազանցում է վերլուծություն և ընդհանրացում

կատարելու հնարավորություններին, ժամանակի սղության հետ կապված երկարատև սպասման իրավիճակը, գոյաբանական և կյանքի իմաստային խնդիրները, արժեհամակարգային փլուզումները, գաղափարական հիմնասյուների խարխուլումը, հուզական գերլարում պահանջող այլ գործոններ [2, էջ 43]:

44-օրյա պատերազմի «պարադոքսները» դեռևս պետք է ուսումնասիրվեն: Օրինակ՝ պատերազմի ընթացքը ներկայացվում էր «Հաղթելու ենք» կարգախոսով՝ ոգեշնչելով մարդկանց, մինչդեռ պատերազմի ավարտն ազդարարող փաստաթղթի հրապարակումը ոչ թե ոգևորություն, այլ հիասթափություն առաջացրեց [9]: Այսինքն, հետպատերազմյան իրավիճակը զանգվածայինֆրուստրացիոն էր՝ կախված երկու հիմնական գործոնից. պատերազմի ծանր, ինտենսիվ բնույթից և նրա ելքի անսպասելիությունից: Անհրաժեշտ եղավ մարդկանց հետ աշխատել՝ օրինակ բերելով առաջին պատերազմի դրական փորձը, այսինքն՝ հաղթական ելքը, որը առիթ էր հանդիսացել ստենիկ հուզական ապրումների համար, ինչի շնորհիվ մարդիկ անհամեմատ հեշտ էին տանում կորստի վիշտը, զրկանքներն ու դժվարությունները (դրանք փոխհատուցվել էին բաղձալի ձեռքբերումով՝ հաղթանակով): Մարդկանց բացատրել ենք, որ ժամանակավոր անհաջողությունը հետագա հաղթանակների ելակետ կարող է դառնալ: Հաջորդ հոգեբանական գործոնը իրավիճակի կանխատեսելիության մակարդակի բարձրացումը և անորոշության հաղթահարումն է: Սկզբնական շրջանում դեռևս հասկանալի չէր, թե ինչպիսի՞ իրավիճակ է ձևավորվել, ի՞նչ է լինելու հետո: Այս առումով ռուսական խաղաղապահ ուժերի ներկայությունը [9] մասնակի բավարարեց մարդկանց անվտանգության պահանջմունքը, թեև այդ ուժերի տեղակայումից հետո էլ լինում էին կրակոցներ, սահմանային բախումներ և այլն: Մեր թիմից զգալի ջանք պահանջվեց, մինչև մարդիկ սկսեցին հաղթահարել հետպատերազմյան սինդրոմները, պատերազմի մասին տազնապային մտքերն ու դադարեն վերապրել սարսափի տեսարանները: Պատերազմի մասնակիցների հետ անցկացված մեր բազմաթիվ զրույցները հաստատում են նախկինում նկատված այն երևույթը, երբ պատերազմական իրավիճակի հոգեբանական փոփոխությունները հետագայում ձևափոխվում, տրանսֆորմացվում են յուրահատուկ «ռազմականացված» բարդույթի, որին սոցիալական հարաբերություններում և պահանջմունքային ոլորտում բնորոշ են առանձնահատուկ դրսևորումներ՝ վարքի կոշտացում, անհանդուրժողականություն, բարոյական կողմնորոշիչների ռիզիկոսություն: Երբեմն նկատելի է լինում խաղաղ կյանքը պատերազմական կանոններին ենթարկելու ձգտումը [5, էջ 286]:

Պատերազմի հետևանքների վերացման և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման ոլորտում ևս առկա էին «ստորջրյա խութեր»: Տեղահանված մարդկանց բնակավորման և գույքի փոխհատուցման խնդիրները, սոցիալական աջակցության նվազ հասցեականությունը առիթ էին հանդիսանում,

որպեսզի մարդկանց մոտ առկա դժգոհությունը, ագրեսիվությունը կուտակվեն ավելի մեծ արագությամբ, քան դրանց համար լուծումներ կգտնվեն:

Անկասկած, հոգեբանական պատճառականություն ունեն արժեհամակարգային փյուզվածության, էքզիստենցիալ-գոյաբանական խնդիրները: Մասնագետները նկատել են [5, 10] պատերազմից հետո մարդկանց մոտ դիտարկվող մի շարք հետաքրքիր երևույթներ:

1. Շրջապատի կողմից լիարժեք հասկացված լինելու պահանջմունքի ձևավորումը: Խոսքը գնում է հոգեբանական ինքնապաշտպանական մեխանիզմի՝ ռացիոնալիզացիայի, գործարկման մասին, որը պատերազմական սթրես տարած մարդուն թույլ է տալիս հաղթահարել մեղքի զգացումը, արդարանալ ինքն իր խղճի առջև, թեթևացնել պատերազմի հիշողությունները:
2. Սոցիալական հարաբերությունների վերակառուցումը նույնպես դառնում է պահանջմունք [5, էջ 286]: Մարդիկ ձգտում են հասնել անվերապահ սոցիալական ճանաչվածության և սոցիալական ավելի բարձր կարգավիճակի, քան ունեցել են մինչև պատերազմը: Մեր դեպքում ռազմական անհաջողության թեման շատերի համար դարձել էր կաշուն միտք: Մարդիկ քննում են միմյանց վարքը և չեն կարողանում ազատվել սևեռուն մտքից՝ միմյանց հարցնելով. «Կռվի ժամանակ որտե՞ղ էիք»:
3. Ապագայի հանդեպ հավատի ու վստահության կորուստը, երբ մարդիկ իրենց կյանքը երկարաժամկետ կտրվածքով այլևս չեն կարողանում պլանավորել, այլ ապրում են ներկա իրողությամբ՝ ասելով. «Ի՞նչ գիտես, թե վաղն ինչ կլինի»: Երևույթը կարելի է անվանել «զանգվածային ցինիզմ»՝ նկատի ունենալով այն բացասական երանգը՝ մերժողականությունը, թերահավատությունը, հոռետեսությունն ու կասկածամտությունը, որոնցով համեմված է [10]:
4. Մարդկանց համար ամենածանրը «խաբված լինելու» զգացումն էր: Ընդ որում, ոչ միայն պատերազմի արդյունքներով, այլ երկարաժամկետ կտրվածքով, այն, որ անարդարությունների ու զրկանքների մասին տարիներով լռել են, մտածելով՝ թող վատ ապրենք, բայց ապահով, մինչդեռ պատերազմը «քշեց-տարավ» այդ ամենը, փոխարենը բերեց հիասթափություն և ֆրուստրացիա:

Հաջորդ գործոնը թշնամու կողմից իրականացվող տեղեկատվա-հոգեբանական հարձակումների հետևանքներն էին և դրանց վերացման ուղղությամբ աշխատանքը: «Անխնա տարածվող» ստահող լուրերի, ասեկոսեների, սպառնալիքների, ճշմարտությունը աղավաղելու դեպքերի արդյունքում առաջ եկան անորոշության ու անպաշտպանվածության զգացումներ, մարդիկ կորցրեցին ինքնուրույն դատելու, փաստերի վրա հենվելու և վերլուծելու կարողությունը, դարձան դյուրահավատ, հավատացին սուտ լուրերին, ունեցան հիասթափություններ: Ակադեմիական միջավայրում ևս կային խնդիրներ.

սրվեցին այն հակասությունները, որոնք ուրվագծվել էին 20-րդ դարի վերջին: Կրթության համակարգում փոխվեց ընկալումների համակարգը, թե ինչպիսին պետք է լինի 21-րդ դարի կրթված մասնագետը, ի՞նչ պետք է ուսուցանվի բուհում, ինչպիսի գիտելիքը կպահպանի իր մրցունակությունը, վերջիվերջո, ի՞նչ ծավալի գիտելիք պետք է հաղորդել ապագա մասնագետին և այլն:

Մենք կարծում ենք, որ նման պայմաններում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի քանի գործոնների վրա, որոնք պահանջում են ոչ ստանդարտ, կրեատիվ լուծումներ: Նախ, վերականգնել վստահությունը անվտանգային համակարգի նկատմամբ: Անվտանգությունը՝ որպես բազային պահանջումնք, պարտադիր է բավարարման համար: Օրինակ՝ ԱրՊՀ-ում կրթության շարունակականության ապահովման կարևոր գործիք ծառայեց հոգեբանական կենտրոնը՝ կազմակերպելով անհատական և խմբային աշխատանքներ, ներգրավելով ինչպես խաղաղապահ ուժերի պրակտիկ հոգեբաններին, այնպես էլ արտերկրից ժամանած լավագույն մասնագետներին: Զգալի արդյունավետությամբ լուծվեցին ինչպես պրոֆեսորադասախոսական, այնպես էլ ուսանողական համակարգմի հոգեբանական բնույթի խնդիրները:

Աշխատանքը հիմնականում ուղղված էր այն խնդիրների լուծմանը, որոնք անձնային ու հանրային մակարդակներում հոգեկան ոլորտի կայուն կառույցները փլուզելու ներուժ ունեն, օրինակ՝ արժեհամակարգային փլուզումները: Արժեհամակարգը բարձրահարկ շենքի նման է. կառուցումը տարիներ է տևում, իսկ փլուզումը՝ ակնթարթ: Մեր ջանքերն ուղղված էին նոր արժեհամակարգային կողմնորոշիչներ գտնելուն և մատուցելուն:

Հոգեբանական աշխատանքի արդյունավետ կիրառական համակարգի ներդրումը: Հաճախ ենք ականատես լինում «լավ» որոշումների, սակայն ապաշնորհ կատարումների: Այս առումով դրական դեր կարող է կատարել Արցախի համայնքներում սոցիալ-հոգեբանական ծառայությունների միասնական համակարգի ներդրման ուղղությամբ կառավարության կողմից տարվող աշխատանքը, որը կարող է էականորեն բարելավել ընդհանուր սոցիալ-հոգեբանական իրավիճակը ողջ երկրամասում: Արդյունավետ կերպով կառավարել բուհական բարեփոխումների բովանդակությունը, ընթացքը, դրանց ուղղվածությունը դարձնել առավել ադապտիվ: Բոլոր համակարգերում բարձր ադապտիվությունը, արագ փոփոխվող պայմաններում ուսումնական, աշխատանքային գործառույթներն ըստ բովանդակության, ձևի ու տեղադրության ճիշտ ուղղորդելու համակարգի ձևավորումը հրատապ պահանջ է:

Հոգեբանական պատճառականություն ունեցող խնդիրների լուծման համակարգում անչափ կարևոր են մասնագիտական քննարկումները, որոնք միտված են ավանդական և ոչ ավանդական, բայց պարտադիր՝ գիտականորեն հիմնավորված համակարգի ձևավորմանը:

Գրականություն

1. **Մարգարյան Վ.Հ.** Մարտական գործունեության հոգեբանություն, Եր. 2009, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 436 էջ.
2. **Մարգարյան Վ.Հ.** Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, Եր.: ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2009, 284 էջ.
3. **Յարամիշյան Վ.Բ.** Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները. Հոգ. գիտ. թեկնածուի ատենախոսություն, ՀՊՄՀ, Եր. 2009.
4. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողով (գեկուցումներ և հոդվածներ), Երևան, 2013., 275 էջ.
5. **Караяни И.Г., Сыромятников И.В.** Прикладная военная психология-СПб.: Питер, 2006., 480 стр.
6. [\(https://www.primeminister.am /hy/interviews-and-press-conferences/ item/ \(այց՝ 01.04.2021\)](https://www.primeminister.am /hy/interviews-and-press-conferences/ item/ (այց՝ 01.04.2021))
7. [\(https://hy.wikipedia.org/wiki/ Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ 2020\)](https://hy.wikipedia.org/wiki/ Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ 2020)
8. [\(https://www.facebook.com /gegham.stepanian \(այց՝ 07.07.2021\)](https://www.facebook.com /gegham.stepanian (այց՝ 07.07.2021))
9. [\(https://armeniasputnik.am/russia/25261787/rusastany-hraparakec-erakoxm-haytararutyanyan-pashtonakan-pastatuxty.html\) \(այց՝ 10.11.2020\).](https://armeniasputnik.am/russia/25261787/rusastany-hraparakec-erakoxm-haytararutyanyan-pashtonakan-pastatuxty.html) (այց՝ 10.11.2020))
10. [\(https://www.civilnet.am/news/625903/արցախ. հետպատերազմյան-տրամադրություններ ու հեռանկարներ/ \(այց՝ 12.07.2021\).](https://www.civilnet.am/news/625903/արցախ. հետպատերազմյան-տրամադրություններ ու հեռանկարներ/ (այց՝ 12.07.2021))

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ, ОБУСЛАВЛИВАЮЩИЕ НЕПРЕРЫВНОСТЬ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В ПОСТВОЕННЫЙ ПЕРИОД (НА ПРИМЕРЕ АРЦАХА)

*Ярамишян В.Б. (Арцахский государственный университет,
Степанакерт, Арцах)*

В статье представлен анализ результатов пилотного исследования психологических состояний студентов и преподавателей Арцахского государственного университета в поствоенный период. В общих чертах охарактеризованы мероприятия по обеспечению непрерывности высшего образования и по преодолению признаков поствоенного синдрома, а также обсуждены вопросы информирования и психологического сопровождения выпускников вуза. Представлено сравнение преимуществ и недостатков существующего онлайн формата занятий, который является результатом обобщения опыта университетского образования в период Ковид-19. На основании полученных данных разработаны конкретные предложения и

психологические рекомендации для преодоления сложных ситуаций различного характера.

Ключевые слова: *посвоенный синдром, психологическая поддержка, непрерывность, высшее образование, он-лайн обучение, креативные решения.*

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ԱՐՑԱԽԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

*Յարամիշյան Վ.Բ. (Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Արցախ)*

Հոգվածում վերլուծված են ղարաբաղյան երկրորդ (44-օրյա) պատերազմից հետո Արցախի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների մոտ առկա հոգեվիճակների ուսումնասիրության որոշ արդյունքներ, համառոտ նկարագրված են բարձրագույն կրթության շարունակականության ապահովման և հետպատերազմյան սինդրոմների հաղթահարման ուղղությամբ համալսարանի ղեկավարության գործադրած ջանքերը, կատարված է առցանց և առկա հաղորդակցման առավելությունների ու թերությունների համեմատություն, քննարկված են շրջանավարտների իրազեկման և կողմնորոշման հարցերը, տրված են այդ խնդիրների լուծման կոնկրետ առաջարկություններ և հոգեբանական երաշխավորություններ:

Հանգուցային բառեր՝ *հետպատերազմյան սինդրոմներ, հոգեբանական աջակցություն, բարձրագույն կրթություն, շարունակականություն, առցանց ուսուցում, կրեաչիվ լուծումներ:*